նույնքան էլ ազգային էր, որովհետև արտացոլում էր «հեթանոսական» շարժման ընդհանուր մտայնությունը և կապվում էր ազգային վերածնության հեռանկարների հետ: Եթե Զյոկյուրյանը «Հին աստվածներում» գործող հերոսներին դիտում էր որպես խորհրդանշաններ, ապա նոր բանախոսը այդ հերոսների հոգեբանությունն ու վարքագիծը վերլուծում է որպես լիարժեք դրամատիկական բնավորություններ, ընդ որում՝ Շանթի ստեղծագործության հիմնական առանձնահատկությունը համարում է այն, որ դրամատիկական կոնֆլիկտը ձևավորվում է ոչ այնքան արտաքին գործողությունների մեջ, որքան հերոսների ներքին աշխարհում:

Երրորդ բանախոսը՝ Տոքտ. Բարսեղյանը, ևս դրամայի հիմնական թեման համարում է զգացմունքի և բանականության պայքարը: Բայց մի քանի սկզբունքային հարցերում նա համաձայն չէ նախորդ բանախոսներին: Մասնավորապես անընդունելի է համարում Զյոկյուրյանի տեսակետն այն մասին, թե գեղարվեստական ստեղծագործության արժեքավորումը հասարակական տեսակետից ամենևին պարտադիր չէ: Նոր բանախոսը ամեն մի ստեղծագործության հասարակական արժեքը համարում է գեղարվեստականության կարևոր պայման: Բարսեղյանը վիճարկում է նաև երկրորդ բանախոսի կարծիքը, թե «Հին աստվածները» ազգային ստեղծագործություն չէ: Նրա համոզմամբ՝ «տոռամայի նյութը ընդհանուր մարդկային է, բայց հարմարեցված հայկական կյանքին ու միջավայրին»: Առարկելով Զյոկյուրյանին՝ նա նկատում է. «Աբեղային աչքի առջև ունայնության փոսը լեցվելեն ետք Աբեղան համարել անհուսության մեջ կանգնած և համեմատել այդ երևույթը Ֆաուստի հետ, սխալ պիտի ըլլար, քանի որ Աբեղայի առջև բացված փոսը լեցվելեն ետքը իր կյանքը այլևս ունայնություն չըլլար, այլ *սերով* լեցված, ինչպես և Ֆաուստը չէ վերջանար անհուսությամբ, այլ կյանքի բովանդակությունը հասարակության ծառայելու մեջ փնտրելով»: Իրոք, Շանթի դրամայի ոգին ոչ թե ամեն ինչի ունայնության հուսահատ գիտակցությունն է, այլ լիարժեք աշխարհիկ կյանքի հաստատումը՝ որպես գոյության իմաստ ու բովանդակություն: Հարազատ ժողովրդի վերածնության իդեալներով ապրող գրողը այլ գաղափար չէր կարող դնել իր ստեղծագործության հիմքում: Հատկանշական է, որ հեղինակավոր ժյուրին՝ իր պատկառելի կազմով՝ Կոմիտաս վրդ., Գր. Զոհրապ, Ռ. Զարդարյան,